

ԱՊՐԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ
ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Վ. Վ. ԳԱՐՐԻՆԵԼՅԱՆ

Ապառնի ժամանակը և եղանակավորությունը (մոդականություն) սերտորեն կապված հասկացություններ են, և այս սերտության աստիճանը հաճախ տարակարծություններ է առաջ բերում լեզվաբանների միջև։ Անդրերևում ապառնի ժամանակի եղանակավորման տարբեր աստիճանների ընդունումից վարժիքները հասնում են մինչև ընդհանրապես այդ ժամանակի լիտերքը, իհարկե, ոչ թե փոխադասական (time), այլ քերականական (tense) կատեգորիայի մասին էլ գոյության ժխտմանը։ Բազմիցս արժարժված այս հարցը հետաքրքիր առնչություններ ունի հայերենում բայի եղանակաժամանակային տարբերակումների հետ, և այդ առնչությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս այս ասպարեզում բավականին նմանություններ վերհանել երկու լեզուների միջև։ Այս խրկու հասկացությունները քննելիս սահմանափակվել ենք եղանակավորության նիսանքերականական դրսևորումներով, չեն ընդգրկվել՝ եղանակավորող լրայերով և բառերով, բառային այլ միջոցներով խոսողի կողմից խոսքի բովանդակության և իրականության հարաբերության գնահատման հնարավորությունները։ Լեզվաբանության մեջ «եղանակավորություն» կամ «եղանակավորում» հասկացության տարբեր ըմբռնումներ կան, որոնք եթե բոլորն էլ նկատի ունենանք, պարզ է դառնում, որ յուրաքանչյուր նախադասություն որոշակի է դասակարգում ունի։ Սույն հոգվածում «եղանակայնություն» ասելով հասկացում է խոսողի կողմից խոսքի բովանդակության և խոսակցության հարաբերության գնահատումը, Հատկանշական է, որ անգլերեն՝ I shall write, you will write նախադասությունները հայերեն առավելապես թարգմանվում են ես կգրեմ, դու կգրես) ձևերով և ոչ ես գրելու եմ, դու գրելու ես, ինչը հաստատվում է թե գրականությունից վերցրած, թե բանավոր, ոչ գեղարվեստական խոսքից քաղած օրինակներով։ Գրելու եմ ձևերի սակավ կիրառությունը վաղուց արդեն նշվել է լեզվաբանների կողմից, և ինչպես ցույց կտրվի ստորև, ապառնի ժամանակի մասին հայ լեզվաբանների և անգլիագետների կարծիքները շատ բանով համընկնում են։ Ապառնի ժամանակ և եղանակ (կամ ավելի լայն առումով՝ եղանակավորություն) հասկացությունների փոխկապակցության խնդիրը բացատրելու համար հարկ է մանրամասն և առանձին-առանձին անդադառնալ երկու լեզուներին։

Անգլերենն ուսումնասիրողների մեջ ապառնի ժամանակի հարցում վաղուց կա երկու մոտեցում։ Լեզվաբանների մի ստվար խումբ (Օ. Նապերսոն, Տ. Փալմեր, Մ. Զուս, Ա. Մըքինթոյ, Բ. Մթրենգ, Մ. Քվլերք, Յ. Սվարթվիկ, Զ. Լայնզ, Ա. Բեյն, Զ. Քլոմ, Լ. Մայլերզ, Ս. Գրինբաում, Ա. Միքնիցկի, Լ. Բարխուդարով) չի ընդունում ձևաբանորեն արտահայտված ապառնի ժամանակաձևի գոյությունը անգլերենում, մինչդեռ «առանդական» լեզվաբանները և նոր, լեզվաբանական նկարագրության մեջ իմաստաբանական (սեմանտիկ) մոտեցմանը հակված լեզվաբանները (Զ. Մըքթոյի, Ռ. Լակոֆ, Զ. Քեթց, Վ. Սվիթ, Ռ. Զանգվուրթ, Շյուրվիյզ, Վ. Վեքլեր, Զ. Մյուլեր, Փ. Բրոուդբենթ, Զ. Քիրզեք, Ու. Գրեսոն, Ա. Վեստ և այլք) shall+infinitive առաջին դեմքի համար և will+infinitive երկրորդ և երրորդ դեմքերի համար կառույցները ընդունում են որպես լեզու ապառնի ժամանա-

կի արտահայտություն, ընդ որում, չփետելով, որ shall-ը և will-ը այլ դեպքերում պահպանում են իրենց եղանակավորող իմաստը, մի դեպքում մի քիչ շատ, մյուս դեպքում՝ քիչ: Առաջին խմբի լեզվաբանները ընդունում են բուն ժամանակի բաժանումը ներկայի, անցյալի և ապառնու, սակայն կարծում են, որ անգլերենում կա ձևաբանորեն արտահայտված երկու ժամանակ (tense): Ումանք դրանք անվանում են ներկա և անցյալ, մյուսները՝ անցյալ և ոչ անցյալ: Սա հիմնավորում են նաև հին անգլերենում միայն ներկա և անցյալ ժամանակաձևերի գոյությունը: ապառնին առտահայտվում էր ներկայի ձևերով և բառային միջոցներով: Կան հեղինակներ, որոնք կարծում են, որ հիմա էլ թե՛ ներկայի, թե՛ անցյալի ձևերով՝ առանձին-առանձին վերցրած կարելի է արտահայտել ցանկացած ժամանակահատվածում դիտարկվող գործողություն, օրինակ. «I see it now»; «It is cold at Valley Forge» (historical present). «We play in Denver next week». Երկր, անցյալ և ապառնի ժամանակներն արտահայտված են ներկայի բայաձևերով և «I didn't know he was there right now»; «We found them yesterday»; «If you tried tomorrow, you might catch them» ներկա, անցյալ և ապառնի ժամանակները արտահայտված են անցյալի բայաձևերով: Ապառնի ժամանակը կամ shall/will+infinitive-ը որպես գրաարտահայտման ձև չընդունողների փաստարկները հետևյալներն են.

1. Ապառնի ժամանակը անգլերենում ձևաբանորեն նշույթավորված չէ, մենչքեռ քերականական ժամանակն անգլերենում ձևական կատեգորիա է, որը կամ նշույթավորված է -ed-ով, կամ էլ չունի այդ ed-ը, հետևաբար, բոլոր ահմաման, անգլերենում միայն երկու քերականական ժամանակ կարող է լինել (Ֆ. Փալմերը, Մ. Ջոնս):

2. Shall-ը և will-ը եղանակավորող բայեր են, բոլոր հատկանիշներով նման են մյուս եղանակավորող բայերին (-s-ի բացակայությունը եզակի երրորդ դեմքում, նրանցից հետո առանց to-ի անորոշի գործածություն և այլն) և կարող են նաև ապառնի գործողություն ցույց տալ, ասենք ինչպես may և can եղանակավորող բայերը:

3. Will-ը հիմնականում կիրառվում է այլ իմաստներով, ապառնի ժամանակի արտահայտումը համեմատաբար փոքր տոկոս է կազմում նրա գործածության մեջ:

4. Կան ապառնի ժամանակ արտահայտելու այլ միջոցներ (հիմնականում տարբեր հեղինակներ այդպիսիք են համարում. սահմանականի պարզ ներկան, սահմանականի ներկա շարունակականը, shall/will + անորոշ շարունակականը, to be going to+infinitive, to be about to+infinitive ձևերը):

5. Անգամ ապագայի մասին ամենավստահ դեղակումք ներառնում է խոսողի վերաբերմունքը, հետևաբար, Վոլերկ չի կարող լինել եղանակավորումից:

Թեև Ռ. Փլմերը, Մ. Գրինբաումը, Ջ. Լիլը, Յ. Սվարթվիկը գտնում են, որ ակնհայտ ապառնի ժամանակ անգլերենում չկա և shall-ի և will-ի ժամանակային և եղանակային իմաստները չի կարելի իրարից բաժանել. այնուամենայնիվ, այս բայերը համարում են չեզոք և չերանգավորված ապառնու ամենամոտ արտահայտողները:

Մ. Ջոնսը և Ջ. Սվարթվիկը to be going to -ն համարում են միակ չեֆաեգավորված (չեղանակավորված) ապառնին, Ռ. Փլմերը համաձայն է՝

¹ Օրինակները տե՛ս L. M. Myers, Guide to American English, N. Y., 1959, p. 410.

² R. Quirk, S. Greenbaum, G. Leech, I. Svartvik, A University Grammar of English, Moscow, 1982, p. 47.

վերը նշված բոլոր կառույցներին տալ «ապառնի ժամանակ» անվանումը, չի լինում է ապառնի ժամանակի հինգ տեսակների մասին. բայց 2. չի լինում է ապառնի ժամանակի հինգ տեսակների մասին «ապառնի ժամանակ» կապակցությունն առաջատ ալլ քերականների նման «ապառնի ժամանակ» կապակցությունն առաջատ է չափերտների միջոցով 2. չի լինում է, որ ինչ չափով որ ապառնի ժամանակի հարց է, այն չափով էլ այն եղանակի հարց է, նշելով shall-ի և will-ի եղանակավորող բայեր լինելը, նա ընդունում է, որ գրանք սովորաբար դործածվում են ապառնի գործողություն կամ վիճակ, ցույց տվող նախադասությունների մեջ, սակայն դա համարում է բնական, հիմնված են ոչ թե փաստի իմացության, այլ խոսողի հավատի, գուշակության կամ մտադրության վրա³։ Միևնույն ժամանակ նա նշում է, որ shall-ի և will-ի ընտրությունը քերականները բացատրում են ինչ-որ նախորդ ընդունված գաղափարներից ելնելով, փոխանակ բացատրելու անհրաժեշտ խոսողների՝ shall-ի կամ will-ի գործածությամբ։ Ա. Բեյնը ապագայում պայման ցույց տվող նախադասություններում ստորադասական եղանակի գործածությունը բացատրում է նրանով, որ ապագան բնութագրվում է անհաստատ է⁴։ 2. Քըրմը նշում է, որ դեռևս «հնագույն» անգլերենում պարզ ներկա ստորադասականը գործածվել է ապառնի ժամանակ ցույց տալու համար («We shall have passed Dover tomorrow if the wind keep favourable.»), բայց հիմա նման գեղեցիկ գործածվում է եղանակավորող բայ (shall, will, should, may և այլն) + անորոշ դերբայ կառույցը, և, քանի որ ապառնի գործողության չիրագործվելու հնարավորությունը մեծ է, առավել գործածական են ստորադասականի անցյալ ժամանակի ձևերը⁵։ Անգլերենում ստորադասականի՝ ապառնի իմաստով գործածությունը նաև փաստարկ է հօգուտ Հր. Աճառյանի այն մտքի, որ «Հնդեվրոպական նախալեզվի մեջ ապառնի իմաստով գործածվում էր ստորադասականը, այս պատճառով էլ, օրինակ, լատիներենում ապառնին հին ստորադասականն է...»⁶։

Այսպիսով, ձևաբանորեն նշույթավորված ապառնի ժամանակաձև ընդունողները ոչ թե ժխտում են, որ shall go, will go ձևերը ապառնի ժամանակահատվածում ընկած գործողություն են արտահայտում, այլ գրտնում են, որ գա նրանց հիմնական ֆունկցիան չէ, որ նրանցում չափազանց զգալի է խոսողի կամային վերաբերմունքը, միջնորդ գոյություն ունեն նման գործողություններ արտահայտելու առավել շեղոք կառույցներ, որոնք, սակայն, ձևաբանական արտահայտություններ չեն։

Ապառնի ժամանակի գոյության կողմնակիցները, մյուս կողմից, չեն փորձում լիովին ժխտել եղանակավորության առկայությունը shall/will + infinitive կառույցում։ Հ. Վեբերը, օրինակ, նշում է, որ քերականական ժամանակի գործածության (ընտրության) մեջ սուբյեկտիվ տարր կա. խոսողը իրադարձությունը կամ գործողությունը ժամանակի մեջ տեղադրում է՝ ելնելով դրա իր ընկալումից, փորձից, նա նաև վկայակոչում է տարբեր բառաբանություններում առկա և շատ հեղինակների ընդունած քերականական ժամանակի այն ըմբռնումը, ըստ որի վերջինս ցույց է տալիս այն ժամանակը, երբ գործողությունը կամ վիճակը դիտվում է իբրև կատարվող կամ գոյություն ունեցող⁷։ Ըստ Վեբերի, shall-ը և will-ը եղանակավորող են

³ J. Lyons. Introduction to Theoretical Linguistics, Cambridge, 1968, p. 310.

⁴ A. Bain. A Higher English Grammar, London, 1904, p. 182.

⁵ G. O. Curme. Parts of Speech and Accidence A Grammar of the English Language, vol. II, Boston, 1935, p. 323—324.

⁶ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Երևան, 1961, էջ 131.

⁷ G. Chr. Wekker. The Expression of Future Time in Contemporary British, Amsterdam, N. Y., Oxford, 1976, p. 7.

միայն այն դեպքում, երբ հնարավորություն, մտադրություն կամ անհրա-
ժեշտություն են արտահայտում: Ժամանակ արտահայտելիս դրանք ապառ-
նի: Ժամանակի ցուցիչներ են: Զեարանորեն եղանակավորող բայեր լինելով
հանդերձ, ապառնի ժամանակ գույց ավել *shall*-ը և *will*-ը չեն կարող
եղանակավորող բայեր կոչվել: դրանք ժամանակի օժանդակ բայեր են:
Թեև ապառնին և եղանակավորությունն այնքան մոտ են, որ դրանք հաճախ
դժվար է սուսձանացնել, Վեբբերի կարծիքով, խոսողներն ունակ են ապա-
դասի մասին դատողություններ անելու, առանց այն մշտական գիտակցու-
թյան, որ այն հաստատ չէ, իրական չէ, առանց անընդհատ մտածելու, որ
ապագան հնարավոր չէ կռահել: Այս մտքի հետ չի կարելի չհամաձայ-
նել:

Որոշ լեզվաբաններ (օրինակ՝ Ռ. Զանգվուրթը) գտնում են, որ միայն
խոսն րհումով չի կարելի որոշել քերականական ժամանակ արտահայտող
ձևերը, և պնդում են, որ բոլոր այն քերականական արտահայտություննե-
րը, որոնց առաջնային նշանակությունը նախորդում, հաջորդում կամ հա-
մաժամանակյա դործողություն ցույց տալն է, պետք է համարվեն ժամա-
նակաձևեր:

Կան ապառնի ժամանակաձևի գոյության կողմնակիցների բազմաթիվ
փաստարկներ և նրանց հակառակորդների նույնքան հակափաստարկներ,
սակայն էականը դրանց շարադրումը չէ: Հայտնի է, որ «մաքուր» ապառնի
ցույց տալու համար *shall*-ը գործածվում է առաջին դեմքի, *will*-ը՝ երկ-
րորդ և երրորդ դեմքերի հետ: Սակարող է ցույց տրվել հետևյալ օրինա-
կով «How sad it is! I *shall* grow old, and horrible, and dreadful. But
this picture *will* remain always young. It *will* never be older than this
particular day of June...»⁹:

Այս տարբերակումների կարիքը չի զգացվում բանավոր խոսքում, երբ
դրանք սղվում են և արտասանվում 11 բոլոր դեմքերի համար: Այնու-
ամենայնիվ, կան այս երկու բայերի գործածության որոշ նրբություններ,
գեղեցիկ, երբ չի կարելի չնկատել դրանց եղանակավորող նշանակությունը,
ինչն էլ հենց դրանք որպես ժամանակի օժանդակ բայեր չճանաչելու առիթ
է տվել:

Shall-ը հին անգլերենում ունեցել է պարտավորության, անհրաժեշ-
տության իմաստ, *will*-ը ցույց է տվել ցանկություն, կամք և հիմա էլ
գործածվում է որպես անկախ բայ, թեև՝ հազվադեպ (He that comes first to
the hill, may sit where he *will*): *Shall*-ի և *will*-ի տարբերությունը, ըստ
Ա. Վեսթի, արտաքին հանգամանքների ազդեցության տակ մի բան ստիպ-
ված անելու և սեփական ցանկությամբ անելու տարբերությունն է¹⁰: Յան-
կություն, կամք, մտադրություն դրսևորելու համար *will*-ը գործածվում է
առաջին դեմքում, *shall*-ը՝ երկրորդ և երրորդ դեմքերում, բայց այստեղ
սրանք արդեն դադարում են ապառնի ժամանակի օժանդակ բայ լինելուց և
հանդես են գալիս որպես եղանակավորող բայեր: «I should like to come to
the theatre with you, Lord Henry», said the lad.

«Then you *shall* come; and you will come too, Basil, won't you?»¹¹

Հնարավոր է, որ *shall*-ը առաջին դեմքում էլ որպես ալդպիսին հան-
դես գա՝ «I *shall* stand my ground as firmly as I can» նախադասության

⁹ R. W. Zandvoort, A Handbook of English Grammar, Croningen, 1969, p. 76.

¹⁰ O. Wilde, The Picture of Dorian Gray, Moscow, 1979, p. 109.

¹¹ A. S. West, The Revised English Grammar, Cambridge, 1972, p. 173.

¹² O. Wilde, p. 113.

մեջ այն նախորդող մտադրությունից բխող վճռականություն է ցույց տալիս: Հետևյալ օրինակում երևում է թե՛ shall-ի այս նշված իմաստը, թե՛ will-ի կամք, ցանկություն արտահայտող իմաստը. She shook her head, smiling a little. „Yes, you would like to know. But I *shall* not tell you I *will* keep my secret.“¹²

Երկրորդ դեմքին ուղղված հարցի մեջ հնարավոր է դործածել *և՛ shall, և՛ will*: Այդ հարցերում սովորաբար կիրառվում է will, սակայն երբեմն դործածում են այն օժանդակ բայը, որն ակնկալվում է պատասխանի մեջ, որտեղ կարող է և shall լինել: Երբեմն ուղղակի խոսքն անուղղակի դարձնելիս shall-ը նույնությամբ պահպանվում է. „He says he shall help us“. սա հատուկ է առավելապես քրիտանական անդիերենին:

Shall-ի և will-ի կիրառությունը Ա. Բեյնը բացատրում է հետևյալ կերպ: I shall come նշանակում է, որ խոսողը առիպված է Վալ ինչ-որ միջին պարտությունում կամ արտաքին հանգամանքների աշխարհային տակ, և ինքն իր մասին խոնարհությամբ խոսելը պատշաճ է (Նա ստիպված եմ գալ, չեմ կարող չգալ): Մինչդեռ իրադրությունը փոխվում է, երբ դիմում ենք որևէ մեկին. You shall come-ը կնշանակի, որ եղբայրս արտաքին ուժերի բերումով առիպված ես, առ միջոց շունչս, պատշաճ է դաս, սակայն այսպիսի ձև դործածելը քաղաքավարի չի համարվել և ընդունվել է will-ը, որովհետև You (they) will come-ը նշանակում է՝ Ձեր (նրանց) կամքն է, ձեզ (նրանց) հաճելի է, որ դուք (նրանք) գաք (դան), հետևաբար, այս քաղաքավարի ձևը հաստատվել է որպես ապառնի ձև երկրորդ և երրորդ դեմքերի համար: Սակայն երբ սպառնի դաշտփարի փոխարեն ցանկանում ենք մեադրություն, վճռականություն արտահայտել, դործածում ենք I will, you shall և he shall: Shall-ը երկրորդ և երրորդ դեմքերում արտահայտում է հրաման, սպառնալիք կամ խոստում¹³: Այդ իսկ պատճառով Will I? ձևն անհեթեթություն է:

Տարբեր դեմքերի հետ այս բայերը կարող են նմանատիպ ալլ իմաստներ կամ իմաստային նրբերանգներ արտահայտել¹⁴, սակայն շատ դեպքերում այս բայերը տարբեր՝ եղանակայնորեն երանգավորված, իմաստներ են ստանում հենց այն դեմքերի հետ դործածվելիս, որոնց հետ ավանդաբար «մաքուր» կամ չեղող ապառնի են արտահայտում: Օրինակ. „He won't see Ann“ (Նա չի դանկանում տեսնել Աննային, վճիռ, կամք, որոշում), „Oil will float on water“ (Յուղը ջրի երեսին կկանգնի. Փալմերի օրինակն է, որն իր իսկ բնորոշմամբ, «ընդհանուր ճշմարտություն է արտահայտում, որ կարող է ապացուցվել ինդուկտիվ ճանապարհով»)¹⁵, „The French will be on holiday today“ (Այսօր ֆրանսիացիները հանգստանալիս կլինեն (հանգստանում են), ինչ-որ բան տոնելիս կլինեն, Այսօր ֆրանսիացում ազատ օր կլինի (է)՝ իմաստասիրական կիրառություն, նույնպես Փալմերի օրինակն է), „The old man will sit on the bank fishing for hours“ (Ծերունին ժամերով ափին նստած ձուկ կորսար՝ բնութագրական դործողություն), „He shall be punished for this“ (Նա կպատժվի սրա հա-

¹² A. Christie, The Witness For the Prosecution, in Selected Stories, Moscow 1976, p. 226.

¹³ A. Bain, p. 167—169.

¹⁴ Տե՛ս R. Quirk, S. Greenbaum, G. Leech, I. Svartvik, A University Grammar of English, Moscow, 1982, p. 54—55, Alfred S. West, A Revised English Grammar, Cambridge, 1912, p. 256, H. Chr. Weker., The Expression of Future Time. John Lyons, Introduction to Theoretical Linguistics, Cambridge, 1968, p. 310 և այլն.

¹⁵ F. R. Palmer, The English Verb, London, 1974, p. 104.

մար՝ խոստում, ապառնայիք, պարտավորություն) և այլն: Will-ի՝ կամք արտահայտող մեկ այլ կիրառություն է հետևյալ նախադասությունը. „None is so blind as they who will not see“ (ասացվածք), որ will not see-ն կթարգմանվի «չեն ցանկանում տեսնել» և ոչ թե «չեն տեսնի կամ չեն տեսնել»: Ահրը նշված օրինակներում will-ի գործածությունը չի շնորհում քերականների կողմից ավանդաբար սահմանված կանոններից, որպես դրա ելակետի և երրորդ դեմքի բնույթի օրինակելի կիրառություն, սակայն բնորոշ օրինակներում will-ը ակնհայտորեն չեղոք ապառնու օժանդակ լայ չէ:

Will-ով կառույցներից շատերը իմաստով համընկնում են հայերենում կամ մասնիկով բայաձևերի իմաստներին. դրանց մեջ հատկապես կարելի է նշել will-ի putative (ենթադրվող) նշանակությունը՝ „She will be quite a big girl now“, որի և «նա հիմա մեծ աղջիկ կլինի» նախադասության մեջ կլիինի-ի նմանության մասին կիսովի ստորև:

Նվ ալսպես, shall-ը և will-ը հաճախ գործածվում են եղանակավորող բայերի նշանակությամբ և այս դեպքում ապառնի ժամանակի հետ ոչ մի առնչություն չունեն: Նրանք արտահայտում են ապառնի ժամանակի գաղափար, և ինչ-որ չափով պահպանում են եղանակավորության երանգներ. այստեղ է, որ եղանակավորությունը և ապառնի ժամանակը դժվար է առանձնացնել միմյանցից, ինչպես հետևյալ օրինակում. „Snow will be good for the wheat“, observed the druggist sagely¹⁶. Ցորենի համար ձունը լավ է, — նկատեց դեղագործը¹⁷:

Հայերեն թարգմանության մեջ ապառնի ժամանակի գաղափարը ընդհանրապես բացակայում է, իսկ այն գաղափարը, որ ապառնից զատ արտահայտվում էր will be (good) կառույցով, բացարձակացված է և ձեռք է բերել «համընդհանուր ճշմարտության» բնույթ:

Սրա հետ մեկտեղ, shall-ը և will-ը գործածվում են չեղոք ապառնի արտահայտելու համար, երբ խոսողը չի գիտակցում ապագայի որևէ եղանակավորում կամ իր կողմից հատուկ (գիտակցված) ալոպիսի վերաբերմունք չի դրսևորում, օրինակ. „The laburnum will be as yellow next June as it is now. In a month there will be purple stars on the clematis and year after year the green night of its leaves will hold its purple stars“¹⁸. (Ջրուրը եկող տարի հունիսին նորից կլինի ոսկեփայլ, ինչպես այժմ: Մեկ ամիս հետո մամրիչները նորից կփթթեն ալ ծաղիկներով, և ամեն տարի նրանց տերևների կանաչ գիշերներում կփայլվեն ծիրանավառ նոր սաղեր)¹⁹:

Վերջին դեպքում shall և will բայերը դիտվում են իբրև սահմանական եղանակի ապառնի ժամանակը կազմող օժանդակ բայեր: Դրանք սահմանական ապառնի օժանդակ բայեր չհամարող լեզվաբանները այդ ձևերը չեն համարում նաև որևէ այլ եղանակի (ստորադասական, պայմանական, ենթադրական, անորոշ, հրամայական, դրպիսիք տարբեր հեղինակ-

¹⁶ Sh. Anderson, Winesburg, Ohio, N. Y., 1937, p. 157.

¹⁷ Ե. Անգերսոն, Ուոնեսբուրգի (XX դ. արտասահմանյան արձակ, Երևան, 1984, էջ 58):

¹⁸ G. Wilde, The Picture of Dorian Gray, p. 103.

¹⁹ Օ. Ուայլդ, Դորիան Գրեյի դիմանկարը, Երևան, 1972, էջ 33:

ների կողմից ընդունվում են որպես անգլերենում բայի եղանակներ) ձևավոր, այսինքն *shall, will come* կառույցը դիտում են որպես աղատ բանականացություն, որում եղանակավորությունը դրսևորվում է ոչ թե եղանակի քերականական-ձևաբանական կառուցորդությամբ, այլ եղանակավորող բայերի միջոցով (թեև *You shall go* կամ *shall-ի* գործածությունը իրավական փաստաթղթերում երբեմն համարում են անուղղակի հրաման, բայց նա դասում հրամայական եղանակին)։ Սա նշանակում է, որ ամեն դեպքում ապառնի ժամանակի արտահայտությունը անգլերենում դուրս չի գալիս սահմանական եղանակի տիրույթից (այստեղ շենք լինարկում հրամայական եղանակը, քանի որ նրա կիրառությունը սահմանափակվում է ուղղակի խոսքով և միայն մեկ՝ երկրորդ դեմքով, բացի այդ, այս եղանակի ժամանակային ըմբռնումն էլ միանշանակ չէ), թեև իհարկե կան հեղինակներ, որ նման եզրակացության հետ համաձայն չեն։ Թրինակ, Ի. Կոշևայան ապառնի ժողովրդի բաժանում է հրամայական (Imperative) սահմանական (indicative) և կամակամ (wantative) ենթատեսակների, որտեղ *"She will do it"* նախադասությունն ընդգրկված է սահմանական ապառնի մեջ²⁰։ Ասվածին հարկ է ավելացնել, որ «վերջին ժամանակներս» (ինչպես գրում են որոշ դասագրքերում և աշխատություններում) *will-ը* սկզբնապես է հայտնաբերվել բոլոր դեմքերի համար պարզապես որպես ստորոնի ժամանակի ցուցիչ, առանց որևէ կամակամ իմաստի, իսկ էլ ավելի հաճախ գործածվում է II, որը բոլորովին ի չիք է դարձնում երկու բայերի տարբերությունները։ Այժմ բացառապես *shall* է գործածվում միայն *Shall I?* հարցերում։ *Will-ի* համընդհանուր կիրառության օրինակ կարող են ծառայել հետևյալ մեջբերումները։ *"I will wait a while, and then I will go. Where do the trucks go?."* *"Why they'll come through it all right"*²¹։

Հայերենում ապառնի ժամանակի և եղանակավորության առնչության այս խնդիրը դիտարկվել է այլ տեսանկյունից, որովհետև հայերենում ապառնի կազմվելու միջոցները մի փոքր այլ են։ Հայերենում էլ կա հրարավորություն ներկա ժամանակը գործածել ապառնի իմաստով (Վաղը մեկնում եմ մրցումների), սակայն այստեղ ապառնի ժամանակը արտահայտվում է ոչ թե ձևաբանորեն, այլ միայն վաղը մակբայի առկայության շնորհիվ։ Այժմ դպրոցներում և բուհերում ուսուցանվող հայերենի քերականության դասագրքերում որպես «ապագայում հաստատ կատարվելիք, խոսողի կաթմբքով ստույգ իրագործվելիք՝ գործողություն» արտահայտելու ձևեր ընդունվում են գնալու եմ, կառնալու եմ կատարելի դերբայով և օժանդակ բայով կառույցները, որոնք էլ համարվում են սահմանական ապառնի։ Իրականությունը, տակայն, սրանով չի սահմանափակվում, և, ըստ էության, թե՛ մեր առօրյա, թե՛ գրական լեզվում գոյություն ունեն բայաձևեր և կառույցներ, որոնք՝ ավելի հաճախ են գործածվում ապառնի ժամանակի գաղափար արտահայտելու համար։ Արևմտահայերենում, ինչպես հայտնի է, այս նպատակի համար գործածվում է պիտի օժանդակ բայը, որը արևելահայերենում համար գործածվում է պիտի օժանդակ եղանակի (եղանակ, որի գոյությունը ոչ բոլորն են ընդունում կամ ընդունում են վերապահությամբ)։ Արևելահայերենում էլ պիտի-ն հաճախ արտահայտում է ապառնի՝ առանց անհրաժեշտության կամ հարկադրանքի, օրինակ.

²⁰ I. Koshevaya, The Theory of English Grammar, Moscow, 1982, p. 150.

²¹ E. Hemingway, Selected Stories, Moscow, 1971, p. 812.

²² Նույն տեղում, էջ 313.

ես պիտի դառնա հայ հրապարակի
 Առանց քնարի, անվարդ խոսքերով.
 Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ
 խավարի ընդդեմ պատերազմելով²⁸,

Այստեղ հեղինակի խոսքը կարելի է բնորոշել որպես 'կամք, վճռակա-
 նություն արտահայտող, սակայն հարկադրանքի, անհրաժեշտության գա-
 դադար ալիքի չկա, և առկա է ապառնիի գաղափարի գերակշռությունը
 այլ իմաստների համեմատ: Այնուամենայնիվ, պիտի-ով ձևերը առավել
 հաճախ արտահայտում են հարկադրանք, պարտավորություն, որոնք պի-
 տի գնամ (բայց ոչ պիտի գնայի) կապակցություններում առավել դրսևոր-
 ված են, քան ապառնիի իմաստը (Այսօր կգա մեր տուն:—Ոչ, երեկոյան
 պիտի մեկին հանդիպեմ): «Ես նրա հաղթին հենց հիմա պիտի պաշտա-
 ինքենեմ» տիպի նախադասություններում ժամանակի պարագաների շնոր-
 հիվ ապառնիի գաղափարը համարյա չիոչին մթադնած է, ցայտուն է
 հարկադրանքի գաղափարը, նախադասության ժամանակն անգամ, թվում
 է, թե ներկա է:

Պիտի-ով կառույցների և պարտավորություն (obligation) արտահայ-
 տող shall-ով կառույցների միջև զուգահեռներ անցկացնելիս պարզվում է,
 որ նրանց մեջ համապատասխանություն չկա, շատ հազվադեպ է հնարա-
 վոր shall-ով նախադասությունը պիտի (պիտի է)-ով թարգմանել, թերևս
 միայն իրավական կարգադրություն, դատարանի որոշում արտահայտող
 նախադասություններում. „The vendor shall maintain the equipment in
 good repair“ Վաճառողը պետք է սարքավորումը լավ վիճակում պահպանի²⁴:
 Իսկ ընդհանրապես պետք է (պիտի) բայը թարգմանվում է must, should,
 ought to բաղերով, իսկ հարկադրանք (compulsion) արտահայտող shall-ը
 թարգմանվում է կ- մասնիկավոր ձևերով, ինչպես օրինակ. He says I shall
 do it՝ Ես ասում է, որ ես կանեմ դա, You shall obey me՝ Դու ինձ կեն-
 քարկվես, He shall surely die՝ Ես անկասկած կմահանամ:

Պիտի (պետք է)-ով և shall-ով կապակցությունների հարուցած բա-
 նականները թերևս դրանց ամենամեծ նմանությունն են: Ինչպես շատերը
 shall + infinitive կառույցը համարում են եղանակավորող բայով ազատ
 բառակապակցություն, որ սահմանական ապառնու ժամանակաձև չէ,
 ինչպես նաև առանձին եղանակ չի կազմում (որովհետև այդ դեպքում
 հարկ կլինի յուրաքանչյուր եղանակավորող բայով առանձին եղանակ
 կազմել, ասենք՝ հավանականության, հարկադրանքի, հնարավորության և
 առն), այդպես էլ որոշ հայ լեզվաբաններ պիտի գնամ ձևերը առանձին
 եղանակ չեն համարել: Ստ. Լիսիցյանը, օրինակ, կարծում էր, որ Արեղ-
 յանն իրավունք չունի այդ ձևերը խոնարհման համակարգի մեջ առնել,
 առաջին նույն սկզբունքով կարելի է առանձնացնել թե՛րևս փամ, փուցե
 գնամ և այլ կապակցություններ և դրանք տարբեր եղանակներ անվանել²⁵:

Ապառնի ժամանակը հայերենում առավելապես արտահայտվում է
 կգեմ, կգրեմ բայաձևերով: Այժմ ուսումնական ծրագրերում ընդունված
 է Մ. Աբեղյանի եղանակների տեսությունը, ըստ որի, նշված բայաձևերը
 ենթադրական եղանակի ներկայի (ապառնու) ձևեր են: Այլ հեղինակներ
 դրանք կոչում են պայմանական վիճակում ենթադրական ապառնի (Հ. Բաթսեղ-

²⁸ Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, Երևան, 1953, էջ 28:

²⁴ R. Quirk, S. Greenbaum, G. Leech, I. Svartvik, A University Grammar... Moscow, 1982, p. 54.

²⁵ Ստ. Լիսիցյան, Ժամանակակից հայերեն լեզվի խոնարհումը (ԵՊՀ գիտական աշ-
 խատություններ), հ. 19, Երևան, 1941, էջ 476—477:

յան, Ս. Ղազարյան), ոմանք էլ՝ պարզապես պայմանական ապառնի (Ա. Ղարիբյան, Ռ. Իշխանյան), շնայած շատերը եղանակի անվանումը պայմանականորեն են ընդունում:

Արժանի է նշել մի փաստ. թեև Կ(կր)կա մասնիկի ծագման մի քանի տեսություններ կան (Ա. Այալյան, Հ. Պետերսոն, Մ. Աբեղյան, Արմ. Մուրվալյան, Ալ. Մարգարյան), դրանց բոլորի հեղինակներն ընդունում են, որ Կ(կ) մասնիկը ծագել է տարբերակելու դրաբարի մեծած ստորա-սահմանականի փոխարինելու եկած սահմանականը (որը գործածվում էր թե՛ դասականին փոխարինելու եկած սահմանականի իմաստով և որը միջին հասցե-նում՝ նոր սահմանական կերպով ձևավորվելու հետո դարձավ ստորադասական) նոր սահմանականից (այն է՝ կը-ով ձևերից), այսինքն Կ-ն ունեցել է սահմանա-կան նշանակություն: Միայն Ալ. Մարգարյանն է դրան վերագրում կա-մական (վերտիկալ) նշանակություն²⁶: Սակայն շատ լեզվաբաններ, ովքեր ընդունել են Այալյանի կամ Աբեղյանի տեսակետը, վը-ի սահմանական իմաստով լարմատների մասին և անգամ ինքը՝ Մ. Աբեղյանը, այդ բանա-ձևերը չեն համարել սահմանական եղանակ: Կվկամ (այստեղ չեն ընկալ-վում կզնայի, կտեսնեի տիպի բայաձևերը) ձևը տարբեր հեղինակներ հա-ճարել են՝ սահմանական, ենթադրական, պայմանական, ըզմական, կա-տակարանական, կանխադրական, սակայն մոտ հարյուր քսան տարվա տե-վոդությունը ժամանակահատվածի (1866—1985) հայ լեզվաբանների աշ-խատությունների ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ շնայած կարծիքների այս բազմազանությունը, կզնամ, կտեսնեմ ձևերը հայ լեզվա-բանների կեսից ավելին ընկալել է որպես սահմանական եղանակի ապառ-նի ծանուցանական, իսկ սրանց առ անվանումներ տվող քերականների մի մասն էլ ընդունում է, որ պայմանականությունը հատուկ չէ այս ձևե-րին, իսկ ենթադրելի գործողության արտահայտումը նրանց առաջնային գործածությունը է²⁷:

Մ. Աբեղյանը 1906 թ. հին ստորադասականը բաժանեց երկու մասի և դրանք կոչեց ըզմական և ենթադրական եղանակներ. այս վերջինը հենց կզնամ, կզնայի ձևերն են: Ստ. Լիսիցյանը և Հր. Պետրոսյանը կզնամ-ը համարում են ըզմական եղանակի բայաձև, իսկ սա փաստորեն նշանա-կում է, որ կզնամ ձևը ըզմական, ենթադրական (պայմանական) եղանակ-ներին դասող քերականները այն փաստորեն դուրս չեն հանում նախկին ստորադասականի ոլորտից, մինչդեռ, ինչպես նշվեց, կը մասնիկը միջին հայերենում ավելացավ գնամ, գնայի ստորադասական բայաձևերին և որ-պես հակադրություն ստեղծեց կզնամ, կզնայի սահմանական բայաձևերը, որոնք պահպանվեցին արևմտահայերենում, իսկ արևելահայերենը ստեղ-ծեց -ում մասնիկով գնում եմ, գնում էր ձևերը: Իհարկե, բացառված չէ, որ դարերի ընթացքում որոշ բառաձևեր իմաստային փոփոխություններ կրեն, սակայն այն փաստը, որ երկար տարիների ընթացքում կզնամ բա-յաձևը ապրեք քերականներ ընկալել և այժմ էլ ընկալում են որպես սահ-մանական ապառնի, հիմք է տալիս մեկ անգամ ևս ընկալելի դրանց պատ-կանելության հարոր (կը- ճյուղի բարբառներում կը-ով ձևերի առաջնային իմաստը սահմանական ներկան և անցյալ անկատարն է, այստեղ խոսքը -ում ճյուղի մեք գրական և խոսակցական լեզվի մասին է):

Հր. Աճառյանը գրում է. «Ներկան և անցյալը իբրև խրոդություն, որոշ օբյեկտիվ գաղափարներ են. բայց ապառնին իբրև շեղած, գուցե և չլինե-

²⁶ Ա. Ա. Մարգարյան, «Կը» եղանակի ծագման մասին (Պատմա-բանասիրա-կան հանդես, 1961, № 1, Երևան, էջ 158—179):

²⁷ Եղանակների անվանումների, կը մասնիկավոր ձևերի և մյուս եղանակաժամանակա-յին ձևերի դասակարգման, կը մասնիկի ծագման մասին հայ լեզվաբանների անսակետների համաթիվ տե՛ս Վ. Գաբրիելյան. Բայի եղանակների խնդիրը հայ լեզվաբանության մեջ (Բաների Երևանի համալսարանի, 1991, № 3, էջ 153—161):

լիք մի փրան, միշտ ենթակա է որոշ վերապահության: Համար. օրինակ՝ վաղը ևս նույն պիտի տեսնի, կտեսնի, տեսած կլինի և այլն, որոնք զանազան ձևի ապառնիներ են: Այդ պատճառով ահա, թեև ամեն լեզվի մեջ էլ կա ներկա և անցյալ ձև, բայց նույնիսկ հարուստ խոնարհմունք ունեցող լեզուների մեջ պատահում է, որ ապառնին հատուկ ձև չունենա [սեմական լեզուներ, գոթերեն, հին գերմաներեն և այլն]²⁸:

Մ. Արեղյանն էլ նշում է, որ ռ/կգնամ, կգնամ ձևերը՝ սահմանական եղանակի ձևերից շատ ավելի հաճախ խորե ապառնի են գործածվում, քանի որ ամեն ապագայում լինելու գործողությունը շատ ինքյան անստույգ է, ուստի և ավելի կարելիության մեջ սպասելիս²⁹, ենթադրական եղանակի (կամասնիկալոր ձևեր)՝ նրա բնութագրման մեջ պարզորոշ ուղղագծվում է ապառնի ժամանակի դադարադր. «ենթադրական կարելիության կամ հնարավորության եղանակն է, որով եղելությունը պատկերացվում է ոչ իբրև իրական, այլ իբրև մտածված, կարծված, հնարավոր, այսինքն, այնպիսի, որ կարող է լինել, գուցե, կարելի է լինի»³⁰:

Հ. Բարսեղյանը նույնպես ապառնի գործողությունները բնութագրում է որպես անստույգ, ենթադրելի, ցանկալի կամ անհրաժեշտ և նրանով է բաղադրում այն փաստը, որ «խոսքի մոմենտից հետո լինելու կամ ապառնի ժամանակակետի համեմատությամբ առկա գործողությունները սովորաբար արտահայտվում են լեզվական, հարկադրական և ենթադրական եղանակներով»³¹: Նշանակում է, որ նշված, լինելու նաև մի շարք այլ լեզվաբաններ ընդունում են, որ հայերենում ապառնի ժամանակն արտահայտվում է ոչ թե մեկ, այլ մի քանի ձևաբանորեն արտահայտված բայաշարքերով. որոնց բոլորի տոգորակից իմաստն էլ (բացի սահմանական եղանակի ձևերից)՝ իսկական, սուբյեկտիվ վերաբերմունք արտահայտելն է, որով էլ հենց (այսպիսով) լեզված ապառնի ժամանակի անստույգությունը և սուբյեկտիվությունը բացատրվում է այդ ձևերի ապառնի գործողություն արտահայտելու փաստը³²:

Եթե ընդունում ենք, որ ապառնի գործողությունը գերազանցապես անստույգ է, ապա ճիշտ է, որ խոսողն այդ գեղքում արտահայտում է կամային վերաբերմունք, և արդարացվում է ապառնիի արտահայտումը «սուբյեկտիվ վերաբերմունքի» եղանակներով (ենթադրական, լեզվական, հարկադրական): Մյուս վողմից չի կարելի հաշվի չառնել կամասնիկի բնույթը, իդրա մասին ուրիշ լեզվաբանների կարծիքը էդ. Աղայանը 1963 թ. կգնամ, կգնայի ձևերը վերաբերում է սահմանական եղանակին, բայց 1967-ին փոխում է կարծիքը՝ դրանք համարելով՝ ենթադրական (կամ կանխադրական՝ պոստուկատիվ)³³: Նույն տատանողականությունն է հանդես բերում Ս. Արախանյանը, որը 1953 թ. կգնամ-ը համարում է սահմանական ապառնի, կգնայի-ն՝ պայմանական անցյալ, իսկ 1969 թ. համապատասխանաբար ենթադրական ապառնի և անցյալ³⁴: Ու. Իշխանյանը գրում

²⁸ Հ. ր. Ահա ու յ ա ն, Կիսկատար քերականություն..., էջ 119:

²⁹ Մ. Արեղյան, Հայոց լեզվի անստույգություն, Երևան, 1965, էջ 578—579:

³⁰ Նույն տեղում, էջ 574:

³¹ Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 196:

³² Այս մասին առավել մանրամասն տե՛ս Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1959, էջ 73—74:

³³ Հ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 370—374, է. Աղայան, Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում (Պատմա-բանասիրական հանդես, 1963, № 3, էջ 239—269):

³⁴ Ս. Արախանյան, Արդի հայերենի պայմանական կամ ենթադրական եղանակը (ՀՄՄՈՒ ԳԱ Տեղեկագիր, Երևան, 1953, № 9, էջ 75—90), Ս. Արախանյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 176—178:

է, թե «...կ և պիտի մասնակցեցուի կաղմված դիմավոր բայերն էլ շատ հաճախ սահմանական են», սակայն որեւէ պարզաբանում չի տալիս, թե որ դեպքերում դրանք պետք է համարել այդպիսին, և որոնք են նույն բայաձևերը տարբեր եղանակներով դասելու հիմքերը և չափանիշները⁸⁵:

Գ. Ջահուկյանը (ինչպես նաև Հ. Բարսեղյանը) փորձում է միացնել ստույգն ու ենթադրելին. «Քանի որ կ(ը)-ն հաստատ. որոշակի ենթադրություն արտահայտող մասնիկի արժեք ունի, ուստի կ(ը)-ով օժտված կ(ը)-գեղամ, կ(ը) օրինակ տիպի բաղաձևերը սահմանական եղանակի արժեք են սահմանում, մանավանդ, որ որպես հավաստի արձանագրվող յուրաքանչյուր սպազա (ապառնի) եղելություն ենթադրական է...»⁸⁶: Գ. Ջահուկյանը զրոյում է նաև, որ ենթադրությունները հենվում են պայմանի վրա. ենթադրական ձևերն արտահայտում են որոշ պայմանով կատարելի եղելություններ, և րա հետևանքով էլ ստացել են պայմանական անվանումը:

Պայմանական անվան կապակցությամբ հարկ է նշել հետևյալը. եթե դրանք սրտահայտում են որոշ պայմանով կատարելի գործողություններ, դա չի նշանակում, որ պայմանը նախադասության մեջ արտահայտվում է կ-ով ձևերով, և այստեղ թերևս ավելի իրավունք ունի իվ. Շիլակաձեն, որ կգնամ-ը համարում էր սահմանական եղանակի, իսկ կգնայի-ն՝ հետևյալի եղանակի բաղաձևեր⁸⁷: Չէ՞ որ «Եթե լույսը հանգչի, լամպը կվառնի» և նմանատիպ նախադասությունների մեջ պայմանի արտահայտիչը «Եթե լույսը հանգչի» ստորադաս նախադասությունն է, որը վարող է համարվել: Լույսը հանգչելու հետևանք, սպասվելիք գործողություն արտահայտող այլ եղանակի բայերի հետ: Օրինակ, անգլերենում «If the light goes out» պայմանի երկրորդական նախադասությունից հետո հնարավոր չէ ստորադասական եղանակի կիրառությունը, այլ միայն սահմանական և հրամայական՝ «If the light goes out, I shall light the lantern» կամ «If the light goes out, light the lantern»: Հայերենում էլ կարող ենք ասել. «Եթե լույսը հանգչի, լամպը վառելու եմ, եթե լույսը հանգչի, լամպը վառիր, եթե լույսը հանգչի, լամպը պրտի վառելմ, եթե լույսը հանգչի, լամպը կվառնմ»: Ըղձականով և ստորադասականով հնարավոր չէ պայմանի հետևանք արտահայտել. դա կհակասեր այդ եղանակների սահմանմանը և բնութագրմանը: Այս փաստը լույս է տալիս, որ եղանակաժամանակային ձևերի արեղյալական դասակարգումը՝ նրանց հետագա սահմանումնէրով, իրականությունը ամբողջովին չէ, որ համապատասխանում է. իսկ պայման կարելի է արտահայտել ոչ միայն ըղձական եղանակի ձևերով, թեև դրանք ավելի հաճախ են գործածվում այդ նպատակի համար. օրինակ. «Եթե գալիս ես, ես կեմ գնում», «Եթե դու կգնաս, ես էլ կգամ», «Ձեռք տուր դրան, և ես կաշխատեմ քեզ», «Եթե վարդակին պիտի ձեռք տաս, սպասիր անջատեմ էլեկտրականությունը» նախադասություններում կան շորտատարներ բաղաձևերը, որոնց եթե ավելացնենք ըղձականով պայման արտահայտելու օրինակները, կտեսնենք, որ հայերենում լրացուցիչ ընդունված բոլոր հինգ եղանակների բաղաձևերով հնարավոր է պայման արտահայտել, և որ դրա արտահայտումը հայերենում թերևս պայմանավորված է շարահյուսական միջոցներով. թեև իմաստային արժեքներից մեկի գերակշռման հետևանքով որևէ եղանակի բաղաձևեր այլ նպատակի համար կարող են ավելի հաճախ գործածվել, քան մյուսներից:

Նմանապես «If you come, I shall/you will be glad» նախադասություն /I shall /she/ will ձևերի գործածությունը և դրանց՝ ուրիշներով փո-

⁸⁵ Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումն ու խոնարհումը, Երևան, 1971, էջ 111:

⁸⁶ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի դարգադրումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 226:

⁸⁷ Իվ. Շիլակաձե, Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները (Լեզու և ոճի հարցեր, II, Երևան, 1964, էջ 155—292):

խարխվելու, անհնարինությունը լրացուցիչ փաստարկ էն դրանց ուսմանական լինելու օգտին: Սոսքը, իհարկե, վերաբերում է այսպես կոչված իրական պայմանն՝ *real condition* / պարունակող սուբյեկտի նախադասությունների, իհարկե, ինչպես հայտնի է, հակառակ դեպքում՝ *unreal condition*՝ անիրական պայման: Հնարավոր է գլխավոր նախադասության մեջ *should/would + infinitive* գործածել: Հնարավոր է նաև *I should be very surprised if he comes*՝ տիպի նախադասություն, որտեղ *should* և *shall*-ի «մեղմացրած» ձևն է ըստ որոշ հեղինակների՝ սուբյեկտի նախադասության հղանակի հղանակիչ, իսկ ողջ նախադասությունը՝ *I shall be very surprised*՝-ի անուղղակի արտահայտումը³⁸:

Իվ. Շխլակաձեն գտնում էր, որ կգնամ-ը ենթադրական իմաստ ունի միայն բարդ նախադասության մեջ, երբ երկրորդական նախադասությամբ արտահայտված է որոշակի պայման: Մրանում նրա և Հ. Բարսեղյանի կարծիքները համընկնում են: Վերջինս կը-ով ձևերին վերագրում է խոսքի կոնսիդ որոշ պայմանով կամ ենթադրաբար, ինչպես նաև, ըստ նրա, ստույգ հայտնվող գործողություն³⁹, Գործողության ենթադրելի և ստույգ բնույթի միասնության այս հակասությունը կանհետանա, եթե ընդունենք, որ այդ իմաստները իրականանում են տարբեր շարահյուսական կառուցվածքում՝ կամ բառային միջավայրերում: Այս անհրաժեշտ ճշգրտումը, սակայն, սահմանմանը չի հետևում: Կը-ով ձևերի արտահայտած իմաստների չարքում Բարսեղյանը առաջինը նշում է խոսքի հաստատվածությունը, աշխատ հավատը ենթակայի մի կատարելի գործողության վերաբերյալ (խոսքը վերաբերում է կգնամ թայմաների առանձին գործածվելուն, ոչ բարդ նախադասություններում): Թե՛ Հ. Բարսեղյանը, թե՛ Իվ. Շխլակաձեն գտնում են, որ կգնամ թայման ենթադրություն է արտահայտում, երբ վերաբերում է ներկա գործողության, իսկ ապառնի վերաբերելիս կորցնում է այդ իմաստը: Այսպես՝ նա հիմա մեծ երեխաներ կռվեն, Այդ սափորը հիմա հազարներ կաբժեն (օրինակները իմն են՝ Վ. Գ.) և այլն: Այստեղ չի կարելի շատանալ այս ձևերի կապը, քանի որ անհամ իմաստի նույնությունը *putative*՝ *will*-ի հետ. հմտ. *"He will be quite a big boy now"* նախադասությունը թարգմանվում է «նա հիմա մեծ տղա կլինի», ուր *will be*-ն և *կլինի*-ն ունեն բառացիորեն նույն իմաստը, այն է՝ ներկայիս վերաբերող, ապառնի ձևով արտահայտված գործողություն, որի իսկությունը ենթադրվում է, երկու դեպքում էլ համոզմունքի երանդով:

Արմ. Մուրմալյանը (որը կը մասնիկը աղգակից էր համարում ճանմանեղրական [ոկոն] մասնիկին՝ «պիտի» նախնական նշանակությամբ) կը մասնիկին կրկնության բաղափար էր վերագրում, ասելով, որ կգնամ-ը կատարյալ ապառնի ձև է, որ ներկա ժամանակում արտահայտում է կրկնություն⁴⁰:

Հետաքրքիր է Ս. Աբրահամյանի կարծիքը այս հարցում: Նա կգնամ և գնալու են ձևերի տարբերությունը համարում է գործողության ստույգ կատարման գաղափարի ծագման ժամանակների տարբերություն: Կգնամ տիպի բայաձևերում այդ գաղափարը նոր է ծագում, փոստի ուղղորդության կենտրոնում դեռևս գործողության կատարման հնարավորությունը և անհրաժեշտությունը հաշվի առնելն է, և թեև այս կանոնը ոչ միշտ է ճիշտ,

³⁸ A. Bain, p. 175.

³⁹ Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 179:

⁴⁰ Տե՛ս Արմ. Մուրմալյան, Կը- մասնիկը և կը- մասնիկավոր բայերի յուրահատուկ առումները հայերենում, Երևան, 1946:

այդ է պատճառը, որ կգնամ թայածեկերը գնալու եմ քայածեկերից հաճախ
են գործածվում: 1953 թ. Ս. Աբրահամյանը կգնամ-ը համարում է սահմա-
նական, իսկ կգնալի-ն՝ պայմանական եղանակով: Թայածեկ և իր պնդումը
հիմնավորում է նրանով, որ «ամենամեծական և անառարկելիորեն ստույգ
կատարվելիք գործողությունների համար» հենց կգնամ ձևն են գործածում,
որ այդ ձևն է համապատասխանում ռուսերենի սահմանական ապառնիին,
և որ իր հաշվումները ջուլց են ուսլիս կգնամ-ի՝ գնալու եմ-ի նկատմամբ
ունեցած բազմապատիկ գերակշռությունը ռուսականության մեջ: Սակայն
անհասկանալի պատճառով հեղինակը 1969 թ. ընդունում է իր մերժած
անթարակալան անվանումը և կգնամ, կգնալի քայածեկերը կոչում համապա-
տասխանաբար ենթադրական ապառնի և անցյալ⁴¹:

Կ- մասնիկով քայածեկերի արտահայտած ստույգ, վճռված, հաստատ
կատարելի գործողության գաղափարն ավելի է շեշտվում, երբ այդպիսի մի
քանի քայածեկ միասին են հանդես գալիս՝ «Հենց ինստիտուտ էլ կընդուն-
վեմ, դիմում էլ կտամ, հինգ տարի էլ քեզ կմեծեմ, բա ո՞նց», «Թեև կո-
չան կգամ ձեր տուն, միասին զբոսնելու կգնանք» և այլն: Կարելի է առաք-
ել, որ այսպիսի նախադասություններում նման քայածեկերի կրկնությունն
է ստեղծում այդ հաստատ կատարելի գործողության տպավորությունը, սա-
կայն այլ քայածեկերի նմանատիպ կրկնության դեպքում ազդեցությունը
փոքր-ինչ այլ է. «Ամռանը գնալու եմ Մոսկվա, այցելելու եմ բոլոր թանգա-
րանները, դիտելու եմ թուրք ստեղծագործությունները», «Վերցնելու եմ
հեռախոսագիրքը, թուրքի համարները գուրս եմ գրելու, հետո զանգ եմ
տալու, թե՛ այս ո՞ւր եք կորել» և այլն: Այստեղ կարելի է նկատել և ուրիշ-
ների (օրինակ՝ Պ. Պոդոսյանի) վողմից արդեն նշված «հեռավոր» ալաու-
նի, և ապազ գործողությունների ինչ-որ նախօրոք պլանավորում (սրանց
անգլերենում ավելի շուտ համարվել է to be going to + Infinitive էստույցով
ապառնին, և «I shall go to Moscow...»-ն է ձեռ կգնամ Մոսկվա, կայցե-
լեմ բոլոր թանգարանները...» նախադասության համարվելը), գործողու-
թյունը հաստատ կատարելի կամքի դրսևորում: Այս ձևերի հետ համեմա-
տությունից պարզ է դառնում, որ կ- մասնիկավոր քայածեկերը ավելի շեշ-
տված կամ «մաքուր» ապառնիի արտահայտության միջոց են և այդ իսկ
պատճառով պետք է դասվեն սահմանական եղանակի քայածեկերի շարքը:

Ինչ վերաբերում է կ- մասնիկավոր (ինչպես նաև shall + Infinitive՝
will + Infinitive) ձևերի արտահայտած երեքորդական իմաստներին. ապա
կարելի է ասել հետևյալը: Կ- մասնիկավոր ձևերը ապառնիից բացի
կարող են գործածվել առածներում (Երկաթե տաք-տաք կծեծենք), բնության
կամ հասարակական որևէ բնորոշ երևույթ հաստատող ասույթներում
(Զուկը ջրում կմեծանա), պատմության, բնության որևէ, սովորաբար բոլորի
կողմից ընդունվող, հասկանիշ շեշտելու համար (Դե, երեխա է, չարություն
կամ, Մեծ մարդ է, կնիվսմեղրենա, Մեծ աշխարհ է, կպատանհի): Կան նաև
այլ էփրատություններ, երբ այս քայածեկերը զանազան իմաստներ են ստա-
նում, ինչպես. պայման, թերահավատություն, ենթադրություն, վճռականու-
թյուն, սովորություն դարձած գործողություններ և այլն: Այս բոլոր իմաստ-
ները պայմանավորված են կոնտեքստների տարբերությամբ, հաճախ էլ
այդ քայածեկերի՝ այլ եղանակների ձևերի փոխարեն գիտակցաբար գոր-
ծություններ, որտեղ նրանք, այնուամենայնիվ, պահպանում են միայն
իրենց հատուկ իմաստային որոշ նրբերանգներ (օրինակ. գալը կոռնա,
կատուն կմկվի, եթե ճիշտը կուզեմ իմանալ, որքան կուզես, որոնք կարող
են փոխարինել դալը ոռնում է, ...որքան ուզում եմ քայածեկերին). նրան-

41 Ս. Աբրահամյան, Արդի հայերենի պայմանական կամ ենթադրական եղանակը,
էջ 85:

42 Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն:

ցի; շատերը այժմ փաստորեն ավելի տարածված են, քան համապատասխան ավանդաբար սահմանական համարվող ձևերը:

Կոնտեքստային փոփոխությունները, սակայն, չեն կարող հոխել բայաձևի ինստուտը, այլ միայն կարող են նրան լրացուցիչ նրբերանգներ հաղորդել: Նման էփրառություններից շատերում այս բայաձևերը կարող են փոխարինվել այլ եղանակի բայաձևերով, էականորեն չփոխելով նախադասության իմաստը. «Կիսկնայեմ միայն նրանց, ովքեր կանգնեն սրիս տակով» (Քսենոֆոն Լև, ...անցնելու են), «Այդ գինուց կիսկնեմ, եթե դու էլ խմես» (խմում եմ, ... եթե դու էլ ես խմում, բայց դու էլ խմիր, բայց դու էլ ևս խմում), «Լավ որսկանը որսը ման շի գա, նա որսը կպահի» (Թումանյան) (ման շի գալիս, պահում է), «Եղբոր որ ընկնի, դանակավորը կշատապնա» (հնկնում է, ...շատանում է), «Ու ձեռքն ընկած մոտիկ բանը / տուր քեզ կտաս շան ճակատին» (Թումանյան) (տալիս է շան...), «Քանի անգամ պատժ կլինեմ» (եմ պատժ): Իհարկե, նրբերանգային տարբերություններ այստեղ կան, սակայն եթե դրանք չլինեն, չէր լինի և լեզվում բայաձևերի այս բազմաբանությունը: Առաջնորդում, ասացվածքներում կմասնակավոր ձևերի ենթադրական-կարելիական իմաստը նույնպես պայմանավորված է ապառնի ձևերի՝ ոչ ըստ իրենց հիմնական նշանակության գործածության: Ապառնի ձևերի՝ ներկա ժամանակի նշանակությամբ գործածվելիս ենթադրականության իմաստ ձեռք բերելու մասին արդեն խոսվել է, միայն առաջնորդում արտահայտվում է ոչ թե տվյալ պահին կատարվող գործողություն, այլ ավելի ընդարձակ ժամանակահատվածում, ընդհանրապես կատարվող գործողություն: Այս իմաստով կրկին դրսևորվում է կով բայաձևերի և shall/will + infinitive կապակցությունների հարադատությունը, որ կարելի է ցույց տալ հետևյալ օրինակով. «Oil will float on water»՝ «Ցուղը ջրի երեսին կկանգնի»: Խոսքը փորձով հաստատված երևույթի մասին է, որի իսկության մեջ խոսողը համոզված է, որը նույնն է, ինչ «Ցուղը ջրի երեսին է կանգնում»: Ենթադրականությունը այստեղ բացատրվում է նաև չարտահայտված պայմանով, որը հասկացվում է՝ «Երբ յուղը լցնենք ջրի վրա, որտեղ էլ յուղը լցնենք ջրի վրա, այն կկանգնի ջրի երեսին»: Եթե ընդհանրապես համեմատելու լինենք Աշանակամանականային ձևերի կիրառությունը անգլերենի և հայերենի առաջնորդում, ասացվածքներում, ասույթներում, ապա նկատելի է, որ հայերենում՝ ստորոգում ունեցող առաջնորդ մեջ կով ձևերը դժգոհ տոկոս են կազմում⁴⁸, մինչդեռ անգլերենում shall/will-ով ասացվածքներ թեև կան /Accidents will happen in the best regulated families, The drowning man will catch at a straw; Murder will out; Nature will have its course; An old dog will learn no new tricks; Too much pudding will choke a dog և այլն), սակայն դրանք չնչին տոկոս են կազմում սահմանական ներկայի ձևերի համեմատությամբ⁴⁹:

Վերագրյալից պետք է անել հետևյալ եզրակացությունները.

1. Shall/will + infinitive կառուցը անգլերենում ապառնի ժամանակին վերաբերելիս արտահայտում է «չեզոք» կամ «մաքուր» ապառնի, երբ խոսողը չի գիտակցում ապառնի գործողության անստուգանելիությունը, չի գործողություն հնարավորությունը և որևէ սուբյեկտիվ վերաբերմունք չի դնում դրա մեջ: Այլ խոսքով, գործ ունենք սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևերի հետ:

2. Նույնը պետք է ասել հայերենի կգնամ, կգրեմ բայաձևերի մասին, որոնք ապառնի գործողություն արտահայտող ամենահաճախ գործածվող ձևերն են: Դրանք նույնպես պետք է գիտել սահմանական եղանակի ապառնի

⁴⁸ Տե՛ս Ա. Տ. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, Առաժանի, Երևան, 1960:

⁴⁹ Տե՛ս A Dictionary of English in Proverbs in Modern Use, Moscow, 1985.

նի ժամանակի ձևեր, որոնք կարող են նույնքան, իսկ երբեմն էլ ավելի «չեզոք» լինել, քան զնալու եմ, գրելու եմ ձևերը:

3. Թե՛ shall/will + infinitive -ը, թե՛ կհաշտամ տիպի բայաձևերը կարող են առաքել, երկրորդական նշանակություններ ձեռք բերել, որոնք չեն փոխում նրանց առաջնային իմաստը: Նման դեպքերում նրանց եղանակավորումը բացատրվում է տարբեր բառային միջավայրերում այդ բայաձևերի գործածությամբ, այլ հղանակների, հաճախ էլ ներկա ժամանակի կիրառություններով: Shall/will բայերի արտահայտած այլ իմաստները բացատրվում են նաև նրանց սեփական տեղեկական նշանակություններով, որոնց «արձագանքները» արտահայտվում են այդ բայերի որոշակի կիրառություններում:

4. Թե՛ իրենց հիմնական, թե՛ երկրորդական կիրառություններում կգնամ/ կգնեմ և shall/will + infinitive ձևերը հիմնականում համարժեքներ են և թարգմանվում են մեկը մյուսով, թեև, իհարկե, այդ տարբերակներ հնարավոր են: Այլ փոսքերով, անդրերևում shall/will -ով արտահայտված շեղոք ապառնին հայերեն թարգմանվում է գերազանցապես կգնամ տիպի բայաձևերով և հակառակը:

БУДУЩЕЕ ВРЕМЯ И МОДАЛЬНОСТЬ В АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

В. В. ГАБРИЕЛЯН

Резюме

Вопреки господствующему ныне в учебниках и учебных программах по армянскому языку положению, формы *կգնամ*, *կգնաս* не являются выражением предположительного или условного наклонения, а формами (как и считалось большинством армянских лингвистов начиная со второй половины XIX века по наши дни) выражения нейтрального будущего, что соотносит их с изъявительным наклонением. Это в равной степени относится и к формам *I shall go*, *You will go* в английском языке. Наличие определенных модальных оттенков значений в указанных формах двух языков объясняется спецификой будущего времени, которому присуща модальность. Из анализа существующих по данному вопросу мнений и сопоставления примеров из художественной англоязычной прозы девятнадцатого и двадцатого веков с их армянскими переводами, а также с другими образцами применения форм *կգնամ*, *կգնաս* в армянской литературе становится очевидным, что формы *I shall go*, *You will go* соответствуют формам *կգնամ*, *կգնաս* в главных и ряде второстепенных значений.